

ուած, փաստացի ու ջերմ շունչով տողորուած մի նամակ, որ դալիս է կենտրոնից: Քրիստափորը ունէր այդ նամակային ազդեցութեան գաղտնիքը աւելի մեծ չափով, քան որ եւ է ուրիշը մեր զեկավար գործիչներին. ոչ ոք չէր գրում նամակները այնքան վարպետ ու խնամոտ ձեռքով եւ այնքան ուժեղ տրամաբանութեամբ. ոչ ոք չէր խտացնում այնքան մաքր, ու հրահանգներ մի նամակի համեմատարար սուղ էջերում: Քրիստափորի իւրաքանչիւր նամակը մի դասախօսութիւն էր, կուռ ու ամփոփ մի տեսութիւն: Բայց Քրիստափորը չափազանց ծոյլ էր նամակագրութեան մէջ, ինչպէս եւ իր խոշոր գաղափարական զինակիցները, բացի Չաւարեանից, որը գրում էր նամակներ անսովոր առատութեամբ, եւ թանկագին, փաստալի, հրահանգիչ նամակներ, որոնք սակայն գրւում էին ընդհանրապէս շատ անխնամ, ցրիւ ու անկապ:

Ստանձնելով «Դրօշակ»ի եւ Արեւմտեան Բիւրօի «քարտուղարութիւնը», Վոսմեանը, ինչպէս ասում են, իր հարազատ «տարերքի» մէջ էր: Այդտեղ նա հմուտ էր, գիւրին էր, յաջողակ էր: Այդտեղ նա ճշտապահ էր, խրդճամիտ, երբեմն մանրակրկիտ: Տրւում էր պաշտօնին իր բովանդակ էութեամբ, տրւում էր սիրով ու յափշտակութեամբ: Քրքրեցէք «Դաշնակցութեան» 25-ամեայ արշիւները թիւքթիւքով, Կովկասում, Ամերիկայում, Բալկաններում, ամէն տեղ, — եւ դուք ամէն քայլափոխում կը հանդիպէք Վոսմեանի երկայնաչունչ ու բովանդակալի նամակներին: Նամակները միշտ կապով ու տրամաբանութեամբ, միշտ համով ու հոտով: Տեղը, ամէն բան տեղը:

Երբ ժամանակը թոյլ էր տալիս, «Դրօշակի քարտուղարը» նետւում էր քաղաքական բարդ հարցերի ուսումնասիրութեան մէջ եւ տալիս էր հետաքրքրական յօդուածներ կուսակցութեան պաշտօնաթերթին: Յիշենք «Դրօշակ»ի նրա հինաւուրց յօդուածաշարքը «Մեքէ եւ մեր Դրացիները» խորագրով:

Երբ Բիւրօի ու խմբագրութեան գործերը թողնում էին ազատ ժամեր, անխոնջ մարզը

գնում էր լսելու դասախօսութիւններ ժընեւի համալսարանում, որով լրացնում էր իր արդէն իսկ բաւականաչափ ընդարձակ ծանօթութիւնների պաշարը:

Վարպետ էր՝ թէ խօսքի եւ թէ գրչի: Եւ եթէ խօսքը իր գահալէժ արագութեան պատճառով միշտ չէր գործում ցանկալի ազդեցութիւն, գրիչը, դրա հակառակ, ազդու էր եւ բեղմնաւոր: Փորձուած, «եփուած» գրիչ էր, յաճախ փոքր ինչ ակադեմիկ, գուրկ քնարական զեղումներից, բայց եւ գերծ այն յեղեղուկ ու սպարապ ճոռոմարանութիւնից, որ յատուկ է պոլսահայ բազմաթիւ հրատարակագիրներին: Միշտ sachlich, ինչպէս ասում է գերմանացին, միշտ բանաւոր, փաստացի ու բովանդակալի: Իսկ պոլսեցիներից շատերի լեզուն՝ մութ ու խրթին, ձգձգուած, տարտամ ու փքուն: Արփիար, Չարդարեան, Վոսմեան բախտաւոր բացառութիւններից են: Եւ Վոսմեանը, անտարակոյս, իր վարժ գրչով*), իր ընդհանուր զարգացմամբ եւ իր կուռ համոզումներով, պատուաւոր տեղ կը բռնէ հայկական հրատարակախօսութեան մէջ:

Մի գլիծ խորապէս տարբերում է նրան իր իմացական միջավայրից. դա՛ Վոսմեանի փաղաքացիական ցկարագիրն է, նրա համոզումը, նրա հաւատամբը: Եկարագիր (caractere), ամուր համոզում, անշեղ հաւատամբ — դրանք դժեր են, որ, տարբարխտարար, շատ չենք հանդիպում մեր պոլսահայ հրատարակախօսների եւ առհասարակ մտաւորականների մէջ: Իսկ այդ դժերը բնորոշում են ժամանակակից արեւմտեան քաղաքացիին, կազմում են նրա մեծագոյն առաքինութիւնները:

* * *

«Հայրենիք» Կ. Պոլսի, «Հայրենիք» Ամերիկայի, «Դրօշակ», «Ազատամարտ» — ահա այն մեծ օրգանները, որոնց մէջ փայլել է Վոսմեանի գրիչը:

ԾԱՆՅՈՒ. *) Մեր ընկերը ունէր եւ լեզուական արտակարգ ընդունակութիւններ, նա միանգամայն ֆրանսերէն, ռուսերէն, գերմաներէն, անգլիերէն գիտէր: